

## ԿԱՐԾԻՔ

Ատենախոսության հեղինակ՝ Սիեր Սուրենի Քումունց

Ատենախոսության վերնագիր՝ «Արցախ - Սյունիքի բարբառային բառապաշարը»

Հայցվող գիտական աստիճան՝ Բանասիրական գիտությունների դոկտոր

Մասնագիտություն՝ Հայոց լեզու Ժ.02.01

### 1. Աշխատանքի ընդհանուր բնութագիրը և արդիականությունը

Սիեր Սուրենի Քումունցի «Արցախ - Սյունիքի բարբառային բառապաշարը» վերտառությամբ ատենախոսությունը հիմնարար և ծավալուն հետազոտություն է՝ նվիրված հայերենի ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբին պատկանող Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի պատմական շերտերի համակարգային, ծագումնաբանական և տիպաբանական քննությանը: Աշխատանքը, որն իրականացվել է պատմական բառագիտության, բարբառագիտության և պատմահամեմատական լեզվաբանության առանցքային սկզբունքների համալրմամբ, ունի բացառիկ արդիականություն և գիտական նշանակություն հայագիտության համար:

Սյունիք-Արցախի բարբառային տարածքն իր պատմաշխարհագրական մեկուսացվածության և լեռնային դիրքի շնորհիվ դարեր շարունակ եղել է հայերենի հնագույն բառաշերտերի պահպանման կարևորագույն «լեզվական ամրոց», ինչպես իրավացիորեն նշվում է ատենախոսության «Ներածություն» բաժնում: Բարբառային բառապաշարի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս նոր լույս սփռել հայերենի՝ ինչպես նախահայերենյան (հնդեվրոպական), այնպես էլ գրաբարյան շրջանի բառաֆոնդի զարգացման վրա՝ լրացնելով գիտական գրականության մեջ առկա բացերը: Այս առիթով ատենախոսը դիպուկ նկատում է. «Հայերենի բարբառները հիմնականում ուսումնասիրվել են հնչյունաբանական և ձևաբանական տեսանկյուններից, մինչդեռ բառապաշարի համակարգային վերլուծությունը մնացել է հետին պլանում»: Սույն աշխատանքով հաջողված փորձ է արվում լրացնելու այդ բացը՝ առաջադրելով Սյունիք-Արցախի բարբառախմբի բառապաշարի՝ պատմական շրջանի շերտերի համալիր քննություն:

Աշխատանքն արդիական է նաև հանրակեզվարանական և ազգային-քաղաքական տեսանկյունից: 2023 թվականի աշխարհաքաղաքական ողբերգական զարգացումների և Արցախի բնակչության բռնի տեղահանության հետևանքով տվյալ միջբարբառախմբի բառապաշարը, որը գոյություն ունի գրեթե բացառապես բանավոր խոսքում, կանգնած է անվերադարձ կորստի վտանգի առջև: Ատենախոսությունը հետևաբար կատարում է ոչ միայն գիտական վերլուծության, այլև ազգային-մշակութային ժառանգության հրատապ փաստագրման և ամրագրման առաքելություն:

## 2. Մեթոդաբանությունը և գիտական նորոյթը

Ատենախոսության մեջ կիրառվող բառապաշարի թեմատիկ-իմաստային դասակարգման մոտեցումը՝ հենված Կ. Բաքի (հնդեվրոպական լեզուների համար) և Գ. Ջահուկյանի (հայերենի համար) ուրվագծած սկզբունքների վրա, ցույց է տալիս հայցորդի խորը տեսական պատրաստվածությունը: Այս մեթոդը թույլ է տալիս ոչ միայն արձանագրել և գիտական քննության ենթարկել բարբառային բառերը, այլև դրանք քննել պատմական և մշակութային համատեքստում՝ բացահայտելով հայեցակարգերի զարգացման առանձնահատկությունները տվյալ բարբառային միջավայրում:

Հեղինակն իրավացիորեն հիմնվում է պատմահամեմատական լեզվաբանության դասական դրույթների վրա՝ կիրառելով եռեզր համեմատության սկզբունքը. բարբառային տվյալ ↔ հին հայերեն (գրաբար) ↔ հնդեվրոպական նախալեզու: Այս մոտեցումը թույլ է տալիս ճշգրտորեն տարբերակել բնիկ և փոխառյալ շերտերը, ինչպես նաև վերականգնել հայերենի զարգացման միջանկյալ, չգրավորված ձևերը: Աշխատանքում ներկայացված վիճակագրական տախտակները (Աղյուսակ 24 և այլն) և գծապատկերները, որոնք քանակապես չափում են բառաշերտերի պահպանվածության աստիճանը, բարձրացնում են աշխատանքի վերլուծական խտությունն ու ապահովում տրամաբանական հիմնավորումները:

Աշխատանքը գիտական շրջանառության մեջ է դնում հսկայական ծավալի բարբառային նոր նյութ, որը մինչ այս չի եղել համակարգային ուսումնասիրության առարկա: Այս նյութը կենսականորեն կարևոր է հետագա բառարանագրական և ստուգաբանական հետազոտությունների համար:

Հիմնվելով հեղինակի կողմից առաջադրված դրույթների և ներկայացված նյութի վրա՝ ատենախոսության հիմնական գիտական նորույթը կարելի է ձևակերպել հետևյալ կետերով.

1. Առաջին անգամ է, որ Սյունիք-Արցախ բարբառախմբի պատմական բառապաշարի նախահայերենյան շերտը ենթարկվում է նման ընդգրկուն և թեմատիկ համակարգված քննության, որի արդյունքում քանակապես հաստատվում է այս բարբառի կարևորագույն դերը հայերենի բառաֆոնդի հնագույն մասի պահպանման գործում:
2. Հեղինակը ներկայացնում է մի շարք բառերի (օր.՝ *աջըղ, ածիկ, կածան, լամփա, սարասընգի, սունդու*) ծագումնաբանության նոր մոտեցումներ՝ հիմնավորելով դրանց բնիկ հայկական՝ հնդեվրոպական ծագումը կամ վերանայելով նախկինում ընդունված՝ փոխառյալ լինելու տեսակետները:
3. Աշխատանքը փաստում է, որ հայերենի բառային արխիվի 81%-ից ավելին վկայվում է Սյունիք-Արցախի բառապաշարում, ինչը եզակի երևույթ է հայ բարբառագիտության մեջ և ցուցադրում է տարածքի լեզվական շարունակականության խորքը:

### 3. Աշխատանքի բովանդակային վերլուծություն

Ատենախոսությունը կառուցվածքային առումով լիովին համապատասխանում է ԲԿԳԿ-ի պահանջներին: Ներածության մեջ հստակ ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները (համակարգել, վերլուծել, համեմատել, առաջարկել նոր վարկածներ), որոնք հետևողականորեն լուծվում են հիմնական երկու գլուխներում:

Ատենախոսության ծավալուն **Ներածությունը** (էջ 4-43) ոչ միայն ծանոթացնում է թեմային, այլև աշխատանքի տեսական-մեթոդաբանական հիմքն է: Հեղինակը հանգամանալից անդրադառնում է Արցախ - Սյունիք բարբառային տարածքի պատմաշխարհագրական նկարագրին: Տեղին և նպատակային են օգտագործված Կորյունի, Մովսես Խորենացու և Ստեփանոս Օրբելյանի վկայությունները, որոնք փաստում են տարածաշրջանի լեզվական ինքնատիպության վաղնջական արմատները:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հայ պատմական բարբառագիտության պատմության քննական ակնարկը: Հեղինակը չի սահմանափակվել սուսկ մատենագիտական թվարկմամբ, այլ կատարել է գիտական մտքի զարգացման վերլուծություն՝ սկսած Ստեփանոս Սյունեցու դասակարգումներից մինչև Ք. Պատկանյանի, Ա. Թոմսոնի, Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի հիմնարար աշխատությունները: Կարևոր է, որ ատենախոսը շեշտադրում է եվրոպացի լեզվաբանների (Յ. Հանուշ, Ա. Թոմսոն) դերը պատմահամեմատական մեթոդի ներդրման գործում, ինչպես նաև արժևորում է Արցախ-Սյունիքի բարբառախմբին նվիրված մասնավոր ուսումնասիրությունները (Ա. Մարգարյան, Լ. Հովհաննիսյան, Կ. Դավթյան և այլք):

Ներածության մեջ հեղինակը հստակ հիմնավորում է իր ընտրած մեթոդաբանությունը՝ բառապաշարի քննությունը կատարել Կ. Բաքի («A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages») և Գ. Ջահուկյանի մշակած թեմատիկ-իմաստային դասակարգման սկզբունքներով: Այս մոտեցումը հնարավորություն է տվել դուրս գալ սովորական այբբենական բառացանկերի շրջանակից և բառապաշարը քննել իմաստային դաշտերի (օրինակ՝ «Ֆիզիկական աշխարհ», «Մարդկություն», «Կենդանիներ» և այլն) կտրվածքով, ինչը նորույթ է նման ծավալի բարբառային նյութի ուսումնասիրության համար:

Հեղինակը նաև հստակեցրել է աշխատանքում կիրառվող տերմինաբանական կազմը: Մասնավորապես տրվել են «բարբառախումբ», «բարբառային բառապաշար», «նախահայերենյան բառաշերտ» և «հին հայերեն» հասկացությունների սահմանումները՝ տվյալ աշխատանքի համատեքստում: Կարևոր է նաև աղբյուրագիտական հենքի ներկայացումը. բացի բարբառագիտական գրականությունից և բառարաններից՝ հեղինակը լայնորեն օգտագործել է բանահյուսական նյութեր և գեղարվեստական գրականություն (Ա. Բակունց, Ս. Խանգաղյան և այլք), ինչը ապահովել է նյութի հավաստիությունն ու ընդգրկունությունը:

**Առաջին գլխում** նախահայերենյան շերտի քննությունը 23 թեմատիկ ենթախմբերով (Աղյուսակ 24) ցուցադրում է նյութի համապարփակ ընդգրկումը: Հատկապես ուշադրավ են մի շարք բառերի ստուգաբանական փորձերը: Օրինակ՝ «աջըղ» («ոխ, վրեժ, զայրույթ»)

բառի խորքային վերլուծությունը: Հայցորդը հաջողությամբ հերքում է բառի՝ թյուրբանական փոխառություն լինելու ընդունված տեսակետը՝ հիմնավորելով դրա կապը բնիկ հայերենի «ջիղ» արմատի հետ: Այս մոտեցումը հիմնվում է ինչպես իմաստային զարգացման (ջիղ → ջղաձգվել → ջղային-ջղայնանալ → «գայրոյթ, ոխ»), այնպես էլ բարբառախմբին բնորոշ հնչյունական տեղաշարժերի վրա (ջիղ > ջըղ > աջըղ):

Նմանատիպ հաջողված վերլուծություն է կատարվել «կածան» բառի պարագայում: Հեղինակը հիմնավորում է դրա կապը հնդեվրոպական \*gwāg- («ուղի, ճանապարհ») արմատի հետ՝ ցույց տալով, որ այս բառը ոչ միայն պահպանել է հին իմաստը, այլև հարստացել է տեղական կենսակերպին բնորոշ բազմաթիվ ածանցյալներով (*մրթըրկածան, քոռ կա/էծան*):

Ուշագրավ են նաև «ածիկ» բառի կապը հնդեվրոպական \*ad-es- («հացահատիկ») արմատի հետ, «խորխ» («մաշկ») բառի միջոցով հնդեվրոպական \*(s)ker- («մաշկ») արմատի իմաստի առկայության հիմնավորումը և այլն: «Լամփա» («փոքր գերան») և «սարասընգի» («ճոճանակ») բառերի համար առաջարկվող հնդեվրոպական վարկածները (համապատասխանաբար \*leubh- «կեղևահան անել» և \*sueng(k)- «ճոճել, ոլորել») ցույց են տալիս, որ Սյունիք-Արցախի բնիկ բառապաշարը կարող է պարունակել հիմնարար ծագումնաբանական տվյալներ:

Երկրորդ զուխը հաջողությամբ կապում է նախահայերենյան ժառանգությունը գրաբարյան զարգացումներին: Ատենախոսության հեղինակը ճիշտ է կատարում գրաբարից անցած բառերի զուգադրումը բարբառային բառերին՝ առանձնացնելով այն դեպքերը, երբ բարբառը պահպանել է գրաբարյան ձևը կամ դրանից ածանցել է նոր կառույցներ (*մարթ*՝ «ամուսին» իմաստի զարգացումը, *կընեգ*՝ կենցաղային գործառույթը):

Կատարվել է փոխառյալ շերտերի (իրանական, սեմական, կովկասյան և այլն) ծագումնաբանական մանրակրկիտ դասակարգում, որը հիմնավորում է ատենախոսության եզրակացության 2.5 կետում բերված քանակական տվյալները (իրանական տարրի գերակշռությունը): Հատկապես արժեքավոր են այն դիտարկումները, որոնք տարբերակում են հին (գրաբարյան) և նոր (բարբառային) փոխառությունները՝ հիմնվելով հնչյունական փոփոխությունների օրինաչափությունների վրա:

Ատենախոսությունը, բացի վերոհիշյալ դրույթներից, ունի մի շարք անվիճելի առավելություններ, որոնք հիմնավորում են հայցորդի՝ ղոկտորական գիտական աստիճանի հայցումը: Աշխատանքը ներկայացնում է բարբառային բառապաշարի ծագումնաբանական և իմաստաբանական համակարգված պատկերը՝ ապահովելով նյութի լիարժեք ընդգրկումը: Բառերը քննվում են խիստ թեմատիկ դասակարգմամբ, ինչը բացահայտում է տվյալ բարբառախմբի աշխարհընկալման և կենսագործունեության առանձնահատկությունները:

Ատենախոսության եզրակացությունները հիմնավորված են կատարված բազմակողմանի և մեթոդաբանորեն խիստ վերլուծությամբ: Հեղինակը ոչ միայն ամփոփում է ուսումնասիրության արդյունքները, այլև դրանք վերածում է լեզվաբանական կարևորագույն դրույթների, որոնք զգալի ներդրում են հայագիտության մեջ:

#### 4. Դիտողություններ և առաջարկություններ

Ուսումնասիրելով ատենախոսությունը՝ հարկ ենք համարում նշել, որ հեղինակը իսկապե՛ս կատարել է մեծածավալ աշխատանք նախնական քննարկումների ժամանակ արված դիտողությունները հաշվի առնելու և տեքստը լրամշակելու ուղղությամբ: Մասնավորապես.

1. Նախկինում նկատվել էր, որ աշխատանքում հաճախակի շեշտվում է բառի բնիկ ծագումը՝ հիմնվելով հնդեվրոպական արմատի հետ ունեցած կապի վրա (օրինակ՝ *Ածիկ, Աջըղ*), սակայն ցանկալի էր ավելի հստակեցնել յուրաքանչյուր բառի՝ նախագրաբարյան, գրաբարյան կամ հետագա շրջանից բարբառին անցնելու ժամանակագրական պատկերը: Գոհունակությամբ փաստում ենք, որ ներկայացված վերջնական տարբերակում հեղինակը, որքանով թույլ են տալիս լեզվական փաստերը, հստակեցրել է այս անցումները և տվել ժամանակագրական ավելի հստակ շերտավորում:
2. Տերմինաբանական որոշ նախկին անհամապատասխանությունների վերաբերյալ դիտողությունը լիովին հաշվի է առնվել, և ատենախոսության տեքստում նկատելի է տերմինաբանական հստակեցում և միօրինակացում՝ հիմնված գիտականորեն ընդունված ձևակերպումների վրա:

3. Ինչ վերաբերում է միջինհայերենյան և աշխարհաբարյան շերտերի առանձին չքննվելուն, ապա, ինչպես նշում է նաև հեղինակը, դա պայմանավորված է ատենախոսության ծավալային սահմանափակումներով և հետազոտության հնագույն շերտերին ուղղված հստակ նպատակադրմամբ: Այնուամենայնիվ, փոխառյալ բառապաշարի քննության հատվածում հեղինակը հաջողությամբ անդրադարձել է նաև հետագա շրջանների ազդեցություններին, ինչը մեղմում է այս բացը:
4. Հեղինակի կողմից սեփական հոդվածներից կատարվող հղումների առատությունը, որը նախկինում դիտարկվել էր որպես թերություն, սույն աշխատանքում ընկալվում է որպես օրինաչափ երևույթ, քանի որ Մ. Քումունցը երկար տարիներ զբաղվել է այս թեմայով և ունի հրապարակած բազմաթիվ արժեքավոր աշխատանքներ, որոնք հիմք են ծառայել սույն ատենախոսության համար:
5. Հեղինակը փորձել է հիմնավորել հնդեվրոպական ծագման վարկածը լրացուցիչ փաստարկներով, ինչը թեև մնում է բանավիճային, սակայն գիտականորեն փաստարկված է և իրավունք ունի գոյություն ունենալու որպես այլընտրանքային տեսակետ:
6. Տեխնիկական և սրբագրական բնույթի թերություններն աշխատանքի վերջնական տարբերակում հիմնականում շտկված են:

#### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Միեր Սուրենի Քումունցի «Արցախ - Սյունիքի բարբառային բառապաշարը» ատենախոսությունը հայ պատմական բարբառագիտության և համեմատական լեզվաբանության ոլորտում կատարված մեծածավալ, հիմնարար և գիտական բարձր արժեք ունեցող աշխատանք է: Հեղինակը հաջողությամբ կիրառել է պատմահամեմատական լեզվաբանության մեթոդները, իրականացրել է բառապաշարի համակարգային և ծագումնաբանական խորքային վերլուծություն՝ բացահայտելով Սյունիք-Արցախի բարբառների եզակի պահպանողական դերը հայերենի հնագույն շերտերի պահպանման գործում: Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ հեղինակը Արցախ-Սյունիքի բարբառային նյութը դուրս է

որ սույն աշխատանքը նույնպես հասանելի կլինի հայագիտությամբ զբաղվող հեղինակներին:

Ներկայացված աշխատանքը կառուցվածքով, մեթոդաբանությամբ, գիտական հիմնական դրույթների նորույթով և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ ատենախոսության հրապարակային պաշտպանությունից հետո Մհեր Սուրենի Քումունցին արժանի էմ համարում շնորհելու բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Բանասիրական գիտությունների դոկտոր՝

Մերգո Հայրապետյան

Գյումրի, 20.02.2026.

Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ:

Շիրակի պետական համալսարանի գիտքարտուղար՝



Կարինե Պետրոսյան

Գյումրի, 23.02.2026.